


խաղաղութիւնը թաղաւորեց, որովհետեւ ապաշխարելու
և Տիրոջ ճանապարհը պատրաստելու շնորհք և վճռակա-
նութիւնը չունեցանք, մեր սովորական արածներէն և
անարդարութիւնն ըստանալով չը կարողացանք և ահա
այսօր էլ հեռու է մեզանից խաղաղութիւնը, պատրաստ
չէ և խռովան է ձշմարտութեան ճանապարհը և ուղղուած
չեն նրա շաւիղները: Դարձեալ ձմեռ է, դարձեալ դաժան
ցուրտ ու սառնամանիք, մարդիկ դարձեալ գողալով
ցրտից սարսափելով եկեղեցի են վազում Տիրոջ շաւղի
պատրաստութեան պատուէրը լսելու, բայց կարծէք այս
անգամ պէտք է որ կարողանանք ասել, «ժամանակը
լրացաւ և հասաւ Աստուծոյ արքայութիւնը, մաքրուեցէք
ձեր մեղքերից, ապաշխարեցէք և Աւետարանին հաւա-
տացէք»: Հաւատացէք, որ թէ և ցուրտ է, բայց մօտ է
Աւետարանի թաղաւորութիւնը, մօտ է դարունը:

Ա. Ծ. Վ. Մ.



ՔԱՂՈՒԱԾՔ Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԻՅ

(С.-Петербург. Вѣдомости 1904 г. № 357)

... Կեանքը միմիայն մէկ նպատակ ունի, ձգտել դէպի
այն կատարելութիւնը, որ ցոյց տուեց մեզ Քրիստոս՝ ա-
սելով, «Եղէք կատարեալ, որպէս ձեր երկնաւոր Հայրը
կատարեալ է»: Մարդուն մատչելի այս միակ նպատակը
խրադործւում է ոչ թէ սինականցութեամբ կամ ճգնու-
թեամբ, այլ սիրոյ հաղորդակցութիւն հաստատելով բոլոր
մարդկանց հետ: Ուղիղ հասկացուած այս նպատակին
ձգտելուց են յառաջանում մարդկային բոլոր օգտա-
կար գործերը և դրա համեմատ են վճռում բոլոր հար-
ցերը...

... Այն սովորական և հասկանալի հարցը, «արեւ եմ
ես արդեօք այն բոլորը, ինչ որ պահանջում է ինձնից

Ուղարկողը, ծագում է մարդկանց մէջ, երբ նրանք գեռ-
հեռու են մահից: Իսկ երբ արդէն մահը մօտ է, չկայ
այլևս այդ հարցը, այլ միմիայն մնում է արդար, զթած
և սիրող Աստուծուն մօտենալու գիտակցութիւնը: Եւ այդ
գիտակցութեան մէջ, գոնէ ինձ համար, լուծուում են,
ինչպէս աղբ ջրի մէջ, բոլոր հարցերը...

... Աստուծոյ արքայութիւնը թէ մեր ներսն է և թէ
մեզնից դուրս երբ մենք հաստատում ենք այդ մեր մէջ,
նա հաստատուում է նաև աշխարհում...

Աստուծոյ արքայութեան մեր մէջ հաստատելը հար-
կաւոր է թէ Աստուծոյ, թէ մեզ և թէ ուրիշների համար:

... Ամեն տեսակ պայմաններում էլ կարելի է մեծ
չափով և արդիւնաւոր կերպով աշխատել ինքնակատարե-
լացման համար և հէնց միմիայն այդ է հարկաւոր թէ
մեզ և թէ Նորան, Ով մեզ կեանք է տուել: Նոյնիսկ որ-
չափ դժուարին են այն պայմանները, որոնց մէջ գտնուում
ենք մենք, այնչափ աւելի արդիւնաւոր կարող է լինել մեզ
վրայ դործ դրած ներքին աշխատանքը թէ մեզ և թէ
ունիշների համար...

... Դուք ասում էք, որ ձեզ թւում է թէ բաւական
չէ, որ մարդ ինքը լաւ է ապրում, համաձայն իւր խղճի
պահանջների, այլ օգտւում էք, որ հնարաւորութիւն ունե-
նաք ուրիշների վրայ ներդրածելու, հարկադրելու ուրիշ-
ներին այնպէս ապրելու, ինչպէս դուք լաւ էք համարում:

Կարելի է միմիայն ուրախանալ, որ գոյութիւն չունի
մի այնպիսի միջոց, որով կարելի լինէր հարկադրել ուրիշ-
ներին ապրել այնպէս, ինչպէս ևս լաւ եմ համարում: Ինչ
կըլինէր մարդկանց դուրսութիւնը, եթէ ամեն ոք կարողանար
այդպէս ներդրածել ուրիշների վրայ: Բարեբախտաբար
այդպիսի միջոց չկայ և ներդրածել ուրիշների վրայ կարելի է
միմիայն կեանքի օրինակով քարոզելով իւր համոզումները:

Այնպէս որ երկրորդ նպատակին հասնելու համար
բաւականէ առաջինը իրադրածել, այսինքն խղճի պահանջ-
ների համապատասխան կեանք վարել...

... Կայ հոգեւոր բարիք և մարմնաւոր բարիք:

Մարմնաւոր բարիքը մենք տեսնում ենք և նրա մասին գատողութիւն ենք տալիս, սակայն հոգեւոր բարիքը ոչ միայն մենք չենք տեսնում դրսից, այլ յաճախ չի տեսնում նոյնիսկ նա, ով ստանում է այդ բարիքը: Այնինչ այդ հոգեւոր բարիքը ոչ միմիայն իրապէս բարիք է, այլ անհամեմատ աւելի թանգագին ու կարեւոր է քան բոլոր մարմնաւոր բարիքները և բաւականութիւն է պատճառում մարդուն թէ այս աշխարհի և թէ յաւիտենական կեանքի մէջ:

Մէկը հարստութիւն և փառք է ձեռք բերում, իսկ մի ուրիշը ճանաչում է թէ հարստութեան և թէ փառքի ոչնչութիւնը, սովորում է արհամարհել այդ և առանց դրան երջանիկ լինել, օրնէ աւելի լաւ:

... Երբ մենք որեւէ նիւթական զրկանքի կամ տանջանքի համար ասում ենք, որ այդ մի չարիք է, այդ ասում ենք միմիայն այն պատճառով, որ մենք կարծատես կամ կոյր ենք և չենք տեսնում այն բարիքը, որ կայ նրա մէջ. ինչպէս մանուկը բարիք չի տեսնում այն բանում, որ նրան արգելում են կրակի մօտենալ կամ դեղ են տալիս: Զրկանքները, վշտերը, տանջանքները ոչ միմիայն նրանց, որոնք օգտուել գիտեն դրանցից, այլ ամենքին ևս մղում են ստոր, զրկանքներով ու արգելքներով լի նիւթական կեանքի շրջանից դէպի ուրախ և ազատ հոգեւոր կեանքի շրջանը: Սրանից չի հետևում, որ պէտք է տանջանքներ որոնել, այլ որ նրանք, ինչպէս և ամեն ինչ աշխարհում, մարդկանց համար բարիք են: Տանջանքները կանոնաւորում են մեր կեանքը: Երբ մեր կեանքը շատ է լցւում տանջանքներով, գիտակցութիւնն ու ուշադրութիւնը բարձրանում, հոգեւոր շրջանն են անցնում և տանջանքները դադարում են...

... Եւս սեղում եմ ձեզ ասել, որ յիշելով վախճանիս մօտենալը, ես աւելի և աւելի ուժգին կերպով եմ զգում այն, ինչ որ դուք էլ գիտէք, որ պէտք է հետզհետէ աւելի մեծ չափով փոխադրել մեր նպատակները աշխարհային կեանքից դէպի հոգեւոր կեանքը, ապրել ոչ միմիայն այս


կեանքն աչքի առաջ ունենալով, այլ և յաւիտենականը: Իսկ այդպէս ապրել կարելի է միմիայն իւր ամբողջ հոգեւոր եռանդը ներքին ինքնակատարելացման վրայ գործ դնելով:

Սովորաբար այսպէս են մտածում, այսպէս են ուսուցանում՝ նաև ճշմարտութեան թշնամիները, թէ ինքնակատարելացումը եսականութիւն է և թէ չի կարելի կեանքից կտրուել կատարելանալու համար: Այդ մեծ անարդարութիւն է: Կատարելանալ կարելի է միմիայն կեանքի մէջ և մարդկանց հետ հաղորդակցութիւն ունենալով: Եւ երբ մէկը, ապրելով մարդկանց մէջ, իւր զլխաւոր նպատակն է դնում կատարելանալը Աստուծոյ առաջ, նա գործնական կեանքի մէջ աւելի մեծ հետեւանքների է հասնում, քան այն մարդը, որ միմիայն արտաքին գործերի յաջողութիւնն է փնտռում:

Գուցէ ձեզ համար ձանձրալի է, ինչ որ ես գրում եմ, իբրև շատ ծանօթ բան, բայց ես գրում եմ այն պատճառով, որ ես ինքս ապրում եմ միմիայն դրանով և իմ փորձը հաստատում է դորա ճշմարտութիւնը:

... Թէ մահից յետոյ ինչպիսի կեանք պիտի լինի, մարդկանց, իրենց իսկ բարկքի համար, չի տուած գիտեալ և հարկաւոր էլ չէ իմանալ: Եթէ նրանք իմանային, որ հանդերձեալ կեանքը այս կեանքից աւելի լաւ պիտի լինի, այն ժամանակ նրանք այս կեանքի մասին չէին հոգալ այլևս և կըշտապէին մեռնել:

Այնպէս որ իմանալ թէ ինչպէս պիտի լինի հանդերձեալ կեանքը մեզ չի տուած և հարկաւոր էլ չէ, իսկ այն, ինչ որ հարկաւոր է իմանալ, այսինքն, որ մեր կեանքը չի վերջանում, այդ տուած է մեզ: Քրիստոսի ամբողջ վարդապետութիւնը հէնց այդ է, այսինքն, որ մարդ ունի երկու կեանք. մարմնական, որ ոչնչանում է, և հոգեւոր, որ չի փոփոխւում և չի ոչնչանում: «Արրահամի լինելուց առաջ ես կամ», ասաց Քրիստոս և այդ վերաբերում է մեզ ամենքիս: Հէնց որ մենք մեր «եօը» փոխադրենք հոգեւոր կեանքի մէջ և սկսենք ապրել միմիայն հոգեւոր նպատակ-



ների համար, մեր կեանքը այլևս չի կարող վերջանալ, նա կըլինի Աստուծոյ մի մասնիկը, որ միշտ եղել է, է և կըլինի:

Եւ մենք բարիք պէտք է գործենք ոչ թէ դիտօքի երկիւղից ստիպուած կամ դրախտին արժանի լինելու յուսով, այլ նրա համար, որ հոգեւոր կեանքով ապրելով, մարդ չի էլ կարող ուրիշ բան ցանկանալ, բացի բարուց: Իսկ հաւատալով իւր հոգեւոր լինելուն, մարդ չի կարող վախենալ մահից, ոչնչանալուց:

Իսկ այն բանի մասին, թէ ինչպիսի կեանք պիտի ունենայ յետոյ, հոգեւոր կեանքով ապրող մարդը չի հոգում՝ հաւատալով Հօր-Աստուծուն, Որից նա առաջացել է և դէպի Որը գնում է և Որի մէջ ապրել է, ապրում է և պիտի ապրի:

Թարգմ. Մամբրէ վարդապետ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Դեկտեմբերի 22-ին Սինոդի շրջաբերականի համաձայն Ագուլիս ուղեորուեց Սինոդի անդամ տէր Մատթէոս վարդապետը Երևանի թեմի այդ կողմը լեւիզիայի ենթարկելու և մի ամուսնալուծական խնդրի մասին քըննութիւն կատարելու:

Նոյն նպատակաւ դեկտեմբերի 25-ին Բաքու ուղեւորուեց Սինոդի անդամ տ. Բաբգէն վարդապետը Շամախու թեմի լեւիզիայի համար:

Բաքու քաղաքի գործակալ և եկեղեցեաց բարեկարգիչ նշանակուեց տ. Զաւէն վարդապետը:

